# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

## Ն Ա Խ Ա Գ Ա Հ

---

## Հ Ր Ա Մ Ա Ն

«21» ապրիլի 2026 թ. N 59-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 25-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2-Ի N 264-Ա/5 ԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի N 731-Ա/5 ՀՐԱՄԱՆՆԵՐՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 120-Ա ՀՐԱՄԱՆՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

Հիմք ընդունելով 2026 թվականի մարտի 20-ի թիվ ՎԴ/16184/05/25 վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի հուլիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի փետրվարի 2-ի «Քաղաքաշինության բնագավառում լիցենզիայի և ներդիրի տրամադրման մասին» N 264-Ա/5 և 2025 թվականի մարտի 26-ի «Քաղաքաշինության բնագավառում լիցենզիայի նոր ներդիրի տրամադրման մասին» N 731-Ա/5 հրամաններն անվավեր ճանաչելու մասին» N 120-Ա հրամանը:
2. Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 63-րդ

հոդվածի 2-րդ մասով և 5-րդ մասի 1-ին պարբերությամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի փետրվարի 2-ի «Քաղաքաշինության բնագավառում լիցենզիայի և ներդիրի տրամադրման մասին» N 264-Ա/5 և 2025 թվականի մարտի 26-ի «Քաղաքաշինության բնագավառում լիցենզիայի նոր ներդիրի տրամադրման մասին» N 731-Ա/5 հրամաններն անվավեր ճանաչելու մասին իրականացնել նոր վարչական վարույթ:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն ընդունելու մասին «ԻՄՊԵՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

4/21/2026

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ